ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ապրիլի 2016 թ.

ՀՀ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովը լսելով և քննարկելով ՀՀ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Ռ.Մ.Մարտիրոսյանի «ՀՀ ԳԱԱ 2015թ. գիտական գործունեության արդյունքների մասին» և ակադեմիկոս-քարտուղար թղթակից անդամ Հ.Հ.Մաթևոսյանի «ՀՀ ԳԱԱ 2015թ. գիտակազմակերպական գործունեության մասին» զեկուցումները՝ արձանագրում է, որ ՀՀ ԳԱԱ նախագահության, բաժանմունքների և գիտական կազմակերպությունների գործունեությունը նպատակաուղղվել է ինչպես գիտական նոր արդյունքների ստացմանը, այնպես էլ ԳԱԱ դերի և տեղի ամրապնդմանը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում: ՀՀ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովը որոշում է՝ հավանություն տալ ՀՀ ԳԱԱ գործունեությանը՝ արձանագրելով հաշվետու ժամանակաշրջանում ԳԱԱ համակարգում կատարված դրական տեղաշարժերը և ձեռքբերումները:

ՀՀ ԳԱԱ ինստիտուտներում և գիտական կենտրոններում շարունակվել են բազային, թեմատիկ և նպատակային ֆինանսավորմամբ, միջազգային ծրագրերով և պայմանագրերով հիմնարար և կիրառական բնույթի գիտական մշակումները:

Կազմվել և շրջանառության մեջ է դրվել ՀՀ ԳԱԱ 2015-2020թթ. հիմնարար գիտական հետազոտությունների ծրագիրը, որը հիմնված է ՀՀ գիտության և տեխնոլոգիաների զարգացման առաջնահերթությունների վրա::

ՀՀ ԳԱԱ և ԿԳՆ Գիության պետական կոմիտեն համատեղ մասնակցել են գիտության զարգացմանը և գիտական կադրերի պատրաստմանը վերաբերող օրենսդրական ակտերի մշակմանը և քննարկմանը:

Աշխուժացել է ՀՀ ԳԱԱ գիտահրատարակչական գործունեությունը, մասնավորապես մենագրությունների և գիտական ամսագրերի հրատարակումը: Զգալիորեն աճել է արտասահմանում հրատարակվող մենագրությունների թիվը:

2015 թ. լուծվել են նաև սոցիալական բնույթի բազմաթիվ հարցեր՝ ավելի քան երկու անգամ բարձրացվել է գիտական աստիճանի համար տրվող հավելավճարը,

երկարաձգվել է հյամակարգի գիտական և գիտատեխնիկական կազմակերպությունների գիտաշխատողների արձակուրդը: <<Մատչելի բնակարան՝ երիտասարդ գիտնականներին և ստեղծագործական միությունների անդամներին>> պետական ծրագրի շրջանակներում ՀՀ Նախագահի հովանավորությամբ կառուցվել և 2015 թ. շահագործման է հանձնվել ԳԱԱ համակարգի երիտասարդ գիտնականների համար նախատեսված բնակելի շենքը: Ակադեմիայի ավելի քան 150 երիտասարդ գիտնական ապահովվել է բնակարանով: Ավարտվել են նաև նոր բնակելի շենքի նախագծային աշխատանքները:

Տարեկան ընդհանուր ժողովը միաժամանակ նշում է ՀՀ ԳԱԱ կարևորագույն այն խնդիրները, որոնց լուծումը կնպաստի համակարգի հետագա գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Վերջին 2 տասնամյակում շեշտակի նվազել է միջին սերնդի գիտնականների թվաքանակը: Անհրաժեշտ է ձեռնարկել գործնական քայլեր այդ հույժ կարևոր հարցը շտկելու համար:

ՀՀ ԳԱԱ-ում դեռևս չի ձևավորվել գիտական հետազոտությունների արդյունքների առևտրայնացումը կազմակերպող մասնագիտացված կառույց: Հայաստանի Հանրապետությունում այսօր չի իրականացվում հետևողական ինովացիոն քաղաքականություն: Հասունացել է հանրապետական ինովացիոն կենտրոն ստեղծելու հարցը, որը հաղթահարելով նորարարական առաջարկների վերաբերյալ տնտեսվարող սուբյեկտների գերակշիռ մասի բացահայտ անտարբերությունը , կմշակի գործող մեխանիզմներ գիտություն-արտադրություն արդյունավետ կապի համար:

Տարեկան ընդհանուր ժողովը որոշում է.

1. Հանձնարարել ՀՀ ԳԱԱ նախագահությանը՝ ՀՀ կառավարությանը դիմել հետևյալ հարցերով՝
   - ֆինանսական աջակցություն ցուցաբերել ՀՀ ԳԱԱ ինստիտուտներում ստացվող կիրառական բնույթի արդյունքները տնտեսության տարբեր ճյուղերում ներդնելու համար,

- գիտաշխատողներին գիտական աստիճանի համար տրվող հավելավճարները հարկերից ազատելու և փուլ առ փուլ կենսաթոշակին հավելելու համար
- լրացուցիչ միջոցներ հատկացնել ինստիտուտների ինֆրակառուցվածքները ժամանակակից գիտատեխնիկական միջոցներով համալրելու համար, ինչն էապես կավելացնի արտաբյուջետային՝ դրամաշնորհային և պայմանագրային աշխատանքների ծավալները,
- բարձրացնել ՀՀ ԳԱԱ համակարգի գիտաշխատողների աշխատավարձը,
- ներմուծվող գիտական նյութերն ու սարքվորումները, ինչպես նաև միջազգային դրամաշնորհներն ազատել հարկերից և տուրքերից (վերանայել գիտական և գիտատեխնիկական բնագավառների հարկային դաշտը),
- լրացուցիչ միջոցներ հատկացնել ՀՀ ԳԱԱ ինստիտուտների ենթակառուցվածքների վերանորոգման և արդիականացման աշխատանքներ իրականացնելու համար,
- աջակցել ՀՀ ԳԱԱ Օրգանական և դեզագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնին ժամանակակից պահանջներին համապատասխան լաբորատոր կենդանիների բժշկակենսաբանական հետազոտությունների կլինիկայի /վիվարիումի/ և GMP-ի ստեղծման հարցում:

2. Հանձնարարել ՀՀ ԳԱԱ նախագահությանը՝
- վերանայել և կատարելագործել գիտական կազմակերպությունների գործունեության գնահատման չափորոշիչների համակարգը,
- գիտական դպրոցները պահպանելու համար ընդգծված ուշադրություն դարձնել միջին սերնդի գիտնականների վիճակի բարելավման հարցին
- Նախագահության կազմում ստեղծել նոր միավոր, որը կզբաղվի ռազմական արդյունաբերության համակարգին առնչվող հարցերով:

3. Հանձնարարել ՀՀ ԳԱԱ բաժանմունքներին՝
   - անհրաժեշտ օգնությամբ խթանել ՀՀ ԳԱԱ գիտական հանդեսների աշխատանքը,
   - առավել արդյունավետ դարձնել ակադեմիական գիտական կազմակերպությունների միջազգային համագործակցությունը արտասահմանյան կենտրոնների և գիտնականների, այդ թվում ՀՀ ԳԱԱ սփյուռքահայ անդամների հետ:

ՀՀ ԳԱԱ ՆԱԽԱԳԱՀ Ռ.Մ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ-ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ.Հ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ